ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Բիոլ. և գյուղատնտ. գիտություններ V, № 3, 1952 Биол. и сельхоз. науки

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՎՈՐՆԵՐԻ ՓՈՐՁԸ

Ա. Տ. Աբրահամյան

ՇԱՔԱՐԻ ՃԱԿՆԴԵՂԻ ՆՈՐ ՁԵՎԻ ՑԱՆՔԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

(Նախնական հաղորդում)

Բարձր բերքատվություն ապահովող սորտերի ներդրման, ագրոտեխնիկական միջոցառումների լրիվ կոմպլեքսի ճիշտ կիրառման և ժամանակակից մեքենայացման առկայության պայմաններում՝ գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվության բարձրացման գործում վճռական նշանակություն ունի բույսերի քանակությունը, նրանց դասավորումը, սնման համապատասխան մակերեսի պահպանումը և ցանքի լիարժեք հեկտարների ստեղծումը։

Հիմք ընդունելով ակադեմիկոս Տ. Դ. Լիսենկոյի կողմից մշակված բույսերի ներտեսակային և միջտեսակային փոխհարաբերությունների տեսությունը, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Բույսերի գենետիկայի և սելեկցիայի ինստիտուտի կողմից ուսումնասիրվում է ագրոբիոլոգիական նոր պրիոմ՝ շաքարահերկ կուլտուրաների (բամբակի, ճակնդեղի, կարտոֆիլի) ցանքի նոր ձև՝ երկշարքանի ցանք։

Ուսումնասիրվող ցանքի այս նոր ձևը ոչ միայն ապահովում է ագրոկանոններով նախատեսված բույսերի քանակությունը հեկտարի վրա, այլև լայն հնարավորություն է ստեղծում մեծ չափով ավելացնելու նրանց քանակությունը և միաժամանակ նորմալ պայմաններ է ստեղծում բույսերի աճման ու զարգացման, ինչպես նաև բերքատվության բարձրացման համար։

Հոդվածում հաղորդվում է շաքարի ճակնդեղի երկշարքանի ցանքից ստացված արդյունքները, որի փորձարկումը կատարվել է 1951 թվականին լայն արտադրական պայմաններում։

Ինչպես հայտնի է, շաքարի ճակնդեղի ցանքերում բույսերի միջշարքային տարածությունը սահմանված է 44,5 սմ, որի դեպքում պետք է հեկտարի վրա ապահովի 100—110 հազար բույս, սակայն փաստացի բույսերի քանակը մեկ հեկտարի վրա միջին հաշվով 70—80 հազարից ավել չի ստացվում։

Երկշարքանի ցանքերում շաքարի ճակնդեղի միջշարքային լայնությունը վերցված է երկու վարիանտով՝

1. Սպիտակավանի 26-ի անվան և Պարնիի Շահումյանի անվան կոլտնտեսության դաշտերում միջշարքային լայնությունը վերցված է զույգ նեղ շարքերում 20 սմ, իսկ երկու զույգ շարքերի միջև 45 սմ հեռավորությամբ։

2. Մյուս կոլտնտեսությունների դաշտերում միջշարքային լայնությունը վերցված է զույգ նեղ շարքերում 20 սմ, իսկ երկու զույգ շարքերի միջև 50 սմ հեռավորությամբ, որոնք երկու վարիանտում էլ զուգահեռ կերպով կրկնվում են։

Միջբույսային տարածությունները թողնված է ինչպես սովորական ցանքերում՝ 18—20 սմ։ Համապատասխան շարքացան չլինելու հետևանքով ցանքը կատարված է ձեռքով՝ ընացանքի եղանակով։

Ցանքերը կատարվում են Սպիտակի շրջանի 6 կոլտնտեսությունում 85,1 հեկտարի վրա, որից 76,1 հեկտար ցանքը չորս կոլտնտեսությունում ունի համապատասխան ստուգիչներ (սովորական ցանք), իսկ 9 հեկտարը երկու կոլտնտեսությունում ցանված է առանց ստուգիչի, որտեղ սովորական ցանք չի եղել։

Երկշարքանի և սովորական (ստուգիչ) ցանքերում նախացանքային մշակումը, ինչպես նաև հետագա մշակման բոլոր տեսակի աշխատանքները կատարվել են միատեսակ հերթականությամբ ըստ բույսերի պահանջի (պարարտացում, փխրեցում, նոսրացում, ստուգում, քաղհան, ջուր)։

Շարովկան սկսվել է մայիսի 9-ից և այդ աշխատանքը կատարվել է երկու ցանքերում էլ կարճ ժամկետում։ Նոսրացումը կատարվել է մայիսի 12—25-ը։

Փխրեցում կատարվել է 4—5 անգամ, ջուրը՝ 3—6 անգամ ըստ կոլտնտեսությունների։

Սեպտեմբերի 27-ից մինչև հոկտեմբերի 4-ի ժամանակամիջոցում յուրաքանչյուր բրիգադի (14 բրիգադ) դաշտից չափված է 100 քառ. մետր տարածություն (3 կրկնողությամբ) և մեր կողմից հաշված է բույսերի քանակը։

Աղյուսակ 1

Բույսերի քանակը երկշարքանի և ստուգիչ ցանքերում

Կոլտնտեսություններ	Ցանքի տարածությունը հեկտ.		Ցանքի միջշարքային հեռավորությ. սմ.		Բույսի քանակը 100 քառ. մ վրա		Բույսի քանակը հեկտ. վրա հազարներով	
	փորձ.	սովորական	փորձ.	սովորական	փորձ.	սովորական	փորձ.	սովորական
Արտագյուղի Մոլոտովի անվան	52	64	20—50	44,5	1320	900	132	90
Սարահարթի Չկալովի անվան	15,5	27,5	20—50	44,5	1410	955	141	95,5
Պարնի Շահումյանի անվան	3,6	7,8	20—45	44,5	1260	810	126	81
Սպիտակավանի 26-ի անվան	5	6,2	20—45	44,5	1270	830	127	83
Խնկոյան	5	—	20—50		1390	—	132	—
Ս ա ր ա լ	4	—	20—50	—	1290	—	129	—
Միջին տվյալները ըստ շրջանի	85,1	105,5	—	—	1323	873	132,3	87,3

Աղյուսակ 1-ում բերվում է բույսերի քանակը 100 քառ. մետր տարածության վրա, միջինը 3 կրկնողությունից։

Աղյուսակում բերված տվյալները ցույց են տալիս, որ երկշարքանի ցանքերում հեկտարի վրա միջին թվով ստացվում է 132 հազար բույս, իսկ սովորական (ստուգիչ) ցանքերում 87 հազար բույս։ Բույսերի ամենաարագ քանակություն մեկ հեկտարի վրա ստացվել է Սարահարթի Չկալովի անվան կոլտնտեսության № 2 բրիգադում (156 հազար բույս), իսկ այդ բրիգադի առաջին և երրորդ օղակներում բույսերի քանակը եղել է 162 հազար։

Որպես առաջին տարվա փորձ, ձեռքով ցանելու պատճառով միջշարքային և միջբույսային տարածությունները բոլոր բրիգադներում ճիշտ չեն պաշտպանված, պահանջված հեռավորությունը կիրառելու դեպքում շաքարի ճակնդեղի երկշարքանի ցանքերում միջին թվով հեկտարի վրա բույսերի քանակը կկազմի 170—180 հազար։ Ագրոտեխնիկայի լրիվ կոմպլեքսի կիրառման դեպքում հեկտարից կստացվի ավելի շատ բերք, քան ստացվել է։

Վեգետացիայի ընթացքում շաքարի ճակնդեղի արմատների աճը և շաքարի կուտակման տոկոսը որոշելու համար երկշարքանի և ստուգիչ (սովորական) ցանքերից՝ հունիսի 30-ից մինչև հոկտեմբերի 30-ը, յուրաքանչյուր տասնօրյակում վերցված են նմուշներ և կատարվել է համապատասխան անալիզները Սպիտակի շաքարի գործարանի լաբորատորիայում։ Նմուշները վերցված են Սարահարթ գյուղի Չկալովի անվան կոլտնտեսության դաշտից։ Ստորև բերվում են անալիզների տվյալները (աղյուսակ 2)։

Աղյուսակ 2

Արմատի աճը և շաքարի կուտակման տոկոսը երկշարքանի և սովորական ցանքերում

Ցանքի ձևը	Արմատի միջին քաշը գրամներով ըստ ժամկետների												Շաքարայնությունը տոկոսներով ըստ ժամկետների								
	30/6	10/7	20/7	30/7	10/8	20/8	30/8	10/9	20/9	30/9	10/10	30/10	20/7	30/7	10/8	20/8	30/8	10/9	20/9	30/9	20/10
Երկշարք	9,1	44,1	95,7	126,2	154,1	169,8	219,0	275,2	300,3	321,0	330,9	382,0	13,1	14,7	16,9	17,8	18,9	19,2	19,6	20,6	18,2
Սովորական	12,9	17,1	24,4	35,8	59,3	88,4	149,4	188,2	251,4	284,7	330,2	381,1	9,6	12,0	15,1	16,9	18,3	20,5	20,8	20,8	18,0

Աղյուսակում բերված տվյալները ցույց են տալիս, որ երկշարքանի և սովորական ցանքերում ճակնդեղի արմատի աճի և շաքարայնության տոկոսի մեջ տարբերություն չի նկատվում, եղած տարբերությունը (հունիս, հուլիս ամիսներում) բերքահավաքի նախօրյակին հավասարվում են։

Բերքահավաքը կատարվել է (սովորական և երկշարքանի ցանքերում) ըստ բրիգադների, համաձայն կոլտնտեսության մշակած պլանի, հոկտեմբերի 12-ից։

Ստորև բերվում է բերքատվության տվյալները ըստ կոլտնտեսությունների (աղյուսակ 3)։

Աղյուսակ 3

Շաքարի ճակնդեղի երկշարքանի և սովորական ցանքերի բերքատվությունը

Կոլտնտեսություններ	Ցանքի տարածությունը հեկտարներով		Փաստացի ստացված բերքը		Մեկ հեկտարի միջին բերքը ցենտներով		Աճ սովորական ցանքի համեմատ
	փորձ.	սովորական	փորձ.	սովորական	փորձ.	սովորական	
Արտագյուղի Մոլոտովի անվան . . .	52,0	64,0	17399,2	11763,6	334,6	183,9	150,7
Սարահարթի Չկալովի անվան	15,5	27,5	7387,3	9306,0	476,6	338,4	138,2
Պարնի Շահումյանի անվան	3,6	7,8	1198,8	1248,0	333,0	160,0	173,0
Սպիտակավանի 26-ի անվան	5,0	6,2	1430,0	638,6	286,0	103,0	183,0
Միջին տվյալները բոլոր շրջանի . . .	76,1	105,5	—	—	357,5	196,3	161,2

Բերված տվյալները համոզիչ կերպով ցույց են տալիս, որ երկշարքանի ցանքերից ստացված միջին բերքը հեկտարից 161 ցենտներով ավել է սովորականից։

Առանց ստուգիչի, երկշարքանի ցանք կատարվել է նաև Խնկոյան գյուղի կոլտնտեսությունում 5 հեկտարի վրա, որտեղ ստացվել է 2095 ց փաստական բերք, մեկ հեկտարի միջին բերքը կազմել է 419 ց և Սարալ գյուղի կոլտնտեսությունում 4 հեկտարի վրա, որտեղ երկշարքանի ցանքից ստացվել է 1598,8 ց ճակնդեղի բերք, հեկտարի միջին բերքը կազմել է մոտ 400 ց։

Նշանակալից կերպով ավելի բերք ստացան Սարահարթի Չկալովի անվան կոլտնտեսության № 2 բրիգադը (բրիգադիր Ս. Մարկոսյան), որի փորձնական-երկշարքանի ցանքի հեկտարի միջին բերքը կազմեց 523 ց, սովորական ցանքինը 333 ց, աճ 190 ց, իսկ այդ բրիգադի առաջին օղակը (օղակավարուհի, շաքարի ճակնդեղի առաջավոր Բավական Սիմոնյան) երկշարքանի ցանքի հեկտարի միջին բերքը կազմել է 571 ց, սովորականը 333 ց, աճ՝ 238 ց։ Նույն կոլտնտեսության № 4 բրիգադը (բրիգադիր Հ. Քոթանջյան) երկշարքանի հեկտարից ստացավ 482,7 ց, սովորականից 301,8 ց, աճ՝ 180,9 ց, իսկ այդ բրիգադի երկրորդ օղակը (օղակավարուհի Բ. Փիլոյան) երկշարքանի ցանքերից ստացավ 504,6 ց հեկտարից բերք, սովորական ցանքից 356,5 ց, աճ 148,1 ց։ Առաջին օղակը (օղակավար Ս. Ասատրյան) երկշարքանի հեկտարից ստացավ 466,6 ց, սովորականից 268,3 ց բերք, աճ՝ 198,3 ց։ Երրորդ օղակը (օղակավարուհի Պ. Ավետիսյան) երկշարքանի հեկտարից ստացավ 477 ց, սովորականից 280—7 ց բերք, աճ՝ 196,3 ց։ Երկշարքանի ցանքերից 350—450 ց, հեկտարից միջին բերք ստացան Արտագյուղի Մոլոտովի անվան կոլտնտեսության № 5 և № 6 բրիգադները և նրանց 8 օղակները, Խնկոյան գյուղի № 1 բրիգադի առաջին օղակը, Սարալ գյուղի № 1 բրիգադի առաջին օղակը, Սարահարթ գյուղի Չկալովի անվան կոլտնտեսության չորս բրիգադաները և բոլոր 12

օղակները, որոնց երկշարքանի ցանքերի հեկտարների միջին բերքը 150—200 ց ավելի է սովորական ցանքի բերքից։

Բերված տվյալները ցույց են տալիս երկշարքանի ցանքի առավելությունը սովորական ցանքերի համեմատությամբ։

Ռեսպուբլիկայի ճակնդեղացան շրջանների կոլտնտեսությունները կիրառելով շաքարի ճակնդեղի ցանքի երկշարքանի ձևը, հնարավորություն կունենան ցանքատարածությունները օգտագործել ռացիոնալ կերպով (ունենալով լիարժեք հեկտարներ) և ստանալ բարձր բերք։ Այդ տեսակետից լավ նախաձեռնություն են հանդես բերում Սպիտակի կոլտնտեսությունները, որոնք ելնելով 1951 թ. արդյունքներից, նախատեսել են 1952 թվականին ավելացնել շաքարի ճակնդեղի երկշարքանի ցանքի տարածությունը։

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի
Բույսերի գենետիկայի և սելեկցիայի ինստիտուտ

Ստացվել է 25 I 1952

А. Т. Атанасян

Результаты нового способа посева сахарной свеклы в производственных условиях

(Предварительное сообщение)

Резюме

Для повышения урожайности сельскохозяйственных культур большое практическое значение имеет густота посева—получение полноценных гектаров.

Новый способ посева свеклы (двухстрочный) увеличивает количество растений на гектар.

Предварительные производственные опыты были заложены Институтом генетики и селекции растений АН Арм. ССР в 1951 г. в 6 колхозах Спитакского района на площади 85 га по вариантам:

1) обычный посев—контроль; расстояние между рядами 44,5 см, между лунками—18—20 см.

2) двухстрочный посев с расстоянием в парных рядах 20 см, между парными рядами 45 и 50 см; расстояние растений в ряду 18—20 см. Посев производился гнездовым способом, вручную.

Результаты текущего года показали, что при двухстрочных посевах на гектаре имелось 132 тыс. растений, а на обычных посевах —87 тыс. растений.

Средний урожай сахарной свеклы при двухстрочном посеве был получен в 353,5 ц/га, а с обыкновенного посева—196,3 ц/га.

[illegible]